



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ձ

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք

<<17>> հուլիսի 2015 թվական

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 6

Գ Յ ՈՒ Մ Ր Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն ՈՒ Հ Ե Ր Թ Ա Կ Ա Ն Ն Ի Ս Տ Ի

Ն Ի Ս Տ Ը Վ Ա Ր ՈՒ Մ Է՝

Գյումրի համայնքի ղեկավար Ս.Մ.Բալասանյանը

Ն Ի Ս Տ Ը Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Մ Է՝

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը

Ն Ի Ս Տ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց ՈՒ Մ Ե Ն՝

Գյումրի համայնքի ավագանու անդամներ՝

Ա. Ադամյան Գ. Ադամյան Ա. Բաղեյան Ա. Բաղդամյան Ա.Գրիգորյան Վ.Եղիզարյան
Հ. Խաչատրյան Հ.Կարապետյան Տ.Հովհաննիսյան Վ. Հունանյան Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան Վ.Շիրինյան Ե. Պողոսյան Մ. Սահակյան Տ. Փանոսյան

Ն Ի Ս Տ Ի Ն Հ Ր Ա Վ Ի Ր Վ Ա Ծ Ե Ն՝

Համայնքի ղեկավարի խորհրդականներ՝ Ա.Բալաբեկյանը, Վ.Սուքիասյանը, Ա.Մովսիսյանը, Հ.Սարգսյանը, քաղաքապետարանի աշխատակազմի՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանը, բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ Կ.Մանասյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետ Ա.Հակոբյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանը, կրթության բաժնի պետ Հ.Սուլթանյանը, ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Մ.Ղազարյանը, համայնքային գույքի հաշվառման և կառավարման բաժնի պետ Ա.Դավթյանը, վերահսկողության բաժնի պետ Ա.Համբարձումյանը, բյուջեի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս.Մինասյանը, գովազդի բաժնի պետ Հ.Թադևոսյանը, իրավաբանական ապահովման բաժնի պետ Ա.Գրիգորյանը, ծրագրերի, արտաքին կապերի և արարողակարգի բաժնի պետ Ա. Հովհաննիսյանը, տրանսպորտի բաժնի պետ Ա. Եղոյանը, ներքին աուղիտի բաժնի պետ Կ. Խաչատրյանը:

Ն Ի Ս Տ Ի Ն Մ Ա Ս Ն Ա Կ Ց ՈՒ Մ Ե Ն Ն Ա Ե Վ՝

ՁԼՄ-ների ներկայացուցիչներ, ՀԿ-ներ (ցուցակը կցվում է)

ԼՍԵՑԻՆ.

1. ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14 դեմ – 0 ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 17-ի հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 205-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱԿՅԱՆ)

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ. Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեն հաստատելու մասին» N 205-Ն որոշմամբ հաստատված Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել 31 000 000 (երեսունմեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամով և այն ուղղել ֆոնդային մաս, որից՝ 18 500 000 (տասնութ միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 4/5/1 գործառական (5113) «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» տնտեսագիտական դասակարգման հոդվածին և 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր

հազար) Հայաստանի Հանրապետության դրամ 6/4/1 գործառական (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին,

2) 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները՝ շարադրել նոր խմբագրությամբ համաձայն համապատասխանաբար N N 1-ին, 2-րդ, 3-րդ հավելվածների:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ կատարել համապատասխան փոփոխություններն օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 170-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 46-Ա որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու խնդրանքով՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սահմանել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝

1) աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անվանափոխության մասով՝ Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կատարելու

մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից ընդունվելիք իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից,

- 2) աշխատակիցների նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացման մասով՝ 2015 թվականի հուլիսի 1-ից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ «ԱՐՄԻՆԵ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաշմանդամություն ունեցող անձանց «Արմինե» կրթամշակութային հասարակական կազմակերպության կամավորների նախաձեռնությամբ բակային ճամբարի կազմակերպման և թվով 100 (մեկ հարյուր) հաշմանդամություն ունեցող և ոչ հաշմանդամ երեխաների ամառային հանգիստը բակային ճամբարում լավագույնս կազմակերպելու նպատակով որպես նվիրատվություն հատկացնել 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԳԾԱՆՇՄԱՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ճանապարհային երթևեկության նշանների և ճանապարհների գծանշման աշխատանքների գնման համար հատկացնել 3 800 000 (երեք միլիոն ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Թույլատրել անհրաժեշտ գնումները իրականացնել բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 4/5/1 գործառական դասակարգման (4239) <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> հոդվածից 1 300 000 (մեկ միլիոն երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, (4269) <<Հատուկ նպատակային այլ նյութեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ «ՅՈՒԹ ՎԵՐՔ» ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ. ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. 2015 թվականի օգոստոսի 8-13-ը Սևանի Վազգենյան դպրանոցի բակում Շիրակի Թեմի Սուրբ Աստվածածին «Յոթ Վերք» եկեղեցու երիտասարդաց Միություն «Գյումրու ուսանողական խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվելիք հոգևոր երիտասարդական վրանային ճամբարի կազմակերպման և ծրագրի իրականացման նպատակով, որպես նվիրատվություն հատկացնել 400.000 (չորս հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԶԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի <<Արամ Սարգսյանի անվան համալիր մարզադպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ շենքի վերանորոգման համար անհրաժեշտ շինարարական նյութեր ձեռք բերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819)

<<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ԳՅՈՒՄՐՈՒ «ԽՈՐԱՆ ԱՐԴ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրիում կայանալիք «Ինչ՞, որտեղ՞, երբ՞» խաղի Հայաստանի առաջնությունը պատշաճ մակարդակով անցկացնելու նպատակով Գյումրու «Խորան Արդ» ինտելեկտուալ կենտրոն հասարակական կազմակերպությանը հատկացնել 90.000 (իննսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 198 (ՄԵԿ ՀԱՐՅՈՒՐ ԻՆՆՍՈՒՆՈՒԹ) ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Թվով 198 (մեկ հարյուր իննսունուրթ) անձանց կանխիկ տրամադրել 2 000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 25-Ի NN 24-Ա, 38-Ա, 42-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂՆԵՐ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին և աշխատակազմի բյուջեի ետամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:

Լ.Զիլավյանը և Ս. Մինասյանը ներկայացրեցին հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի մարտի 25-ի թվով 3 (երեք) որոշումներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.
- 1) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 184-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 24-Ա որոշման նախաբանի երրորդ տողի «1-ին» թիվը փոխարինել «3-րդ» թվով,

2) «Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի թեմին սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցների գույքահարկի 1.433.292 (մեկ միլիոն չորս հարյուր երեսուներեք հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարման նկատմամբ արտոնություն սահմանելու մասին» N38-Ա որոշման՝

ա. նախաբանի երկրորդ պարբերության երկրորդ տողի «կետով» բառը փոխարինել «մասով» բառով, իսկ հինգերորդ տողի «ենթակետով» բառից հետո ավելացնել «,8-րդ, 9-րդ կետերով» թվերը և բառը,

բ. 1-ին կետի «թեմին» բառից հետո ավելացնել «(հարկ վճարողի հաշվառման համար՝ 05503942, հասցեն՝ ք. Գյումրի Ռիժկովի 6)» բառերը և թվերը, իսկ «թեմին» բառից հետո՝ «թվով 7(յոթ)» բառերը և թիվը,

3) «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի N 157-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 42-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության «բառերը» բառից հետո ավելացնել «և թիվը» բառերը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ԵՎ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԷՍՔԻԶԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ԶԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Զիլավյանին:

Լ.Զիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայտարարել մրցույթ՝ Հովհաննես Շիրազի և Ավետիք Իսահակյանի անվամբ հուշամեդալներ ստեղծելու նպատակով:
2. Սահմանել մրցանակներ լավագույն երկու էսքիզային նախագծեր ներկայացնողների համար՝ 40 000-ական (քառասուն հազարական) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:
3. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի

հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4727) «Կրթական, սպորտային և մշակութային նպաստներ բյուջեից»> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

4. Մրցույթի արդյունքում ընտրված էսքիզների հիման վրա մեղալների պատրաստման, շնորհման հետ կապված գործառույթները վերապահել Գյումրի համայնքի ղեկավարին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ծեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 11/1 հասցեի 0,24 (զրո ամբողջ քանչորս հարյուրերորդական) հեկտար մակերեսով հողամասը և 39,98 (երեսունինն ամբողջ իննսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը (կաթսայատուն) (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29042015-08-0017) նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ «Վահան Թեքեյանի անվան Գյումրու թիվ 2 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից օգտագործելու նպատակով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ N 2/17 ՀԱՍՅԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի N 2/17 հասցեի 78,8 (յոթանասունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Գյումրի համայնքի սեփականության իրավունքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 25122014-08-0034) փոխանակության միջոցով օտարել՝ քաղաքացիներ Մարտին Սարոյանի և Նազիկ Մալխասյանի՝ Ալեք Մանուկյան փողոց N 2/21 հասցեի 78,8 (յոթանասունութ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07052015-08-00329) հետ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ N 9/11 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի պետի տեղակալ Հ.Գասպարյանին:

Հ.Գասպարյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի քաղաքի Շարա Տալյան փողոցի N 9/11 հասցեի 200.0 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ Գյումրի համայնքի սեփականության իրավունքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

N 30052014-08-0025) փոխանակության միջոցով օտարել՝ քաղաքացիներ Գևորգ Մուրադյանի և Անահիտ Ավետիսյանի՝ Շարա Տայյան փողոց N 5^ա հասցեի 200.0 (երկու հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2027976) հետ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

15. <<ԷԼԲԻՍ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2013-2014 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ, ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/1, ՄԱՏՆԻՇՅԱՆ 5/2, ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ 47/1 ՀԱՍՑԵՆԵՐԻ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի ետամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:

Ս. Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն <<Էլբիստ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2013-2014 թվականների ընթացքում գոյացած, Գյումրի քաղաքի Մատնիշյան 5/1 հասցեում գտնվող շինության գույքահարկի և Մատնիշյան 5/1, Մատնիշյան 5/2, Խրիմյան Հայրիկ 47/1 հասցեների հողի հարկի տույժերի և տուգանքների վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժերի և տուգանքների՝ 1263908 (մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար ինը հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի և հողի հարկի տույժերի և տուգանքների՝ 63186 (վաթսուներեք հազար հարյուր ութսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի, ընդամենը՝ 1327094 (մեկ միլիոն երեք հարյուր քսանյոթ հազար ինսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՋՈՆ ՕՀԱՆՆԵՍ ՕՅՈՒՆՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ,

2010-2013 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՑՈՂ ՃԱՆԱՊԱՐՀ ԹԻՎ 15/1 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս. ՄԻՆԱՍՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից գեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի բյուջեի ետամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ս. Մինասյանին:

Ս. Մինասյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

**կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0**

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Սահմանել արտոնություն Ջոն Օհաննես Օյունջյանին սեփականության իրավունքով պատկանող, 2010-2013 թվականների ընթացքում գոյացած Գյումրի քաղաքի Հարավ-Արևելյան շրջանցող ճանապարհի թիվ 15/1 հասցեում գտնվող շինության գույքահարկի և հողի հարկի տույժերի վճարումների նկատմամբ, ազատելով գույքահարկի տույժի՝ 12076 (տասներկու հազար յոթանասունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի և հողի հարկի տույժի՝ 24069 (քսանչորս հազար վաթսուհինը) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի, ընդամենը՝ 36145 (երեսունվեց հազար հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ <<ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՇԻՆՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ա. ՄԿՐՏՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից գեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Ա. Մկրտչյանին:

Ա. Մկրտչյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14

դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել <<Կենտրոնական գրադարան>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրու <<Արտաշես Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքում տեղակայված Հովհաննես Թումանյանի անվան գրադարանի տարածքում շինվերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 75-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(ՁԵԿՈՒՑՈՂ՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
ՀԱՐԱԿԻՑ ՁԵԿՈՒՑՈՂ՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)**

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հարցը և հարակից զեկուցման իրավունքը տվեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին:

Լ.Ջիլավյանը ներկայացրեց հարցը և հիմնավորումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 14
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի հավաքական թիմերի մասնակցությունը Համաշխարհային համահայկական

վեցերորդ խաղերին պատշաճ մակարդակով ապահովելու նպատակով դրամական միջոցներ հատկացնելու մասին» N 75-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետում 15 000 000 (տասնհինգ միլիոն) թիվը և բառերը փոխարինել 15 915 600 (տասնհինգ միլիոն ինը հարյուր տասնհինգ հազար վեց հարյուր) թվով և բառերով,
- 2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց